ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 նոյեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

155
(3005)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱՅԻՑ 4 ՏԱՐԻ ԱՆՑ. ԻՆՉ ՈՒՆԵՆՔ



Այսօր՝ նոյեմբերի 9-ին, լրացավ Արցախը հանձնելու կապիտուլյացիոն պայմանագրի եւ Արցախի պատմության վերջին էջը շրջելու գործընթացի 4-րդ տարելիցը: Տարելից, քանի որ 2020 թվականից հետո լուսաբացները Հայաստանում այլեւս տոնական չեղան:

2020 թվականի նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրեցին մի փաստաթուղթ, որով ավարտվեց սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմը. այն կոչվեց «Եռակողմ հայտարարություն», որն ընդգրկում էր 9 կետեր: Դրանք են.

«1. Հայտարարվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում կրակի եւ բոլոր ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ Մոսկվայի ժամանակով 00:00-ից: Ադրբեջանի Հանրապետությունը եւ Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ Կողմեր) կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում:

2. Աղդամի շրջանը վերադարձվում է Ադրբեջանի Հանրապետությանը մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 20-ը:

3. Լեռնային Ղարաբաղում շփման գծի երկայնքով եւ Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայվում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմ՝ 1960 զինվորներով՝ հրաձգային զենքով, 90 զրահամեքենայով, 380 միավոր ավտոմոբիլային եւ հատուկ տեխնիկայով:

4. Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբը տեղակայվում է հայկական զինված ուժերի դուրսբերմանը զուգահեռ: Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի գտնվելու ժամկետը 5 տարի է՝ հաջորդ 5 տարվա ավտոմատ երկարաձգմամբ, եթե կողմերից ոչ մեկը ժամկետի ավարտից վեց ամիս առաջ չհայտարարի այդ դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին:

5. Հակամարտության կողմերի համաձայնեցրած պայմանավորվածությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը բարձրացնելու նպատակով ստեղծվում է Հրադադարի վերահսկման խաղաղապահ կենտրոն:

6. Հայաստանի Հանրապետությունը մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 15-ը Ադրբեջանի Հանրապետությանն է վերադարձնում Քելբաջարի շրջանը, իսկ մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 1-ը՝ Լաչինի շրջանը: Լաչինի միջանցքը (5 կմ լայնությամբ), որը կապահովի Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ եւ միեւնույն ժամանակ չի շոշափի ք. Շուշին, կմնա Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ առաքելության վերահսկողության տակ: Կողմերի համաձայնությամբ՝ առաջիկա երեք տարում կորոշվի Լաչինի միջանցքով երթեւեկության նոր երթուղու կառուցման ծրագիրը, որը կապահովի Ստեփանակերտի եւ Հայաստանի միջեւ կապը՝ հետագայում այդ երթուղու պահպանման համար ռուսական խաղաղապահ զորակազմի վերատեղաբաշխմամբ: Ադրբեջանի Հանրապետությունը երաշխավորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների երթեւեկության անվտանգությունը երկու ուղղություններով:

⇨ էջ 2



Թեեւ երկար փնտրտուքներից հետո Նիկոլ Փաշինյանը Սրբուհի Գալյանին նշանակեց արդարադատության նախարար, բայց նրա «սրտի թեկնածուն» շարունակում է մնալ Գրիգոր Մինասյանը: Համենայն դեպս այդպիսի տպավորություն են ստացել նոր նախարարի ներկայացման օրը վարչապետի հետ հանդիպման մասնակիցները: Հիշեցնենք, որ նոյեմբերի 5-ին Նիկոլ Փաշինյանը ՀՀ արդարադատության նախարարությունում փակ ձեւաչափով նիստի ժամանակ աշխատակազմին ներկայացրեց նորանշանակ նախարար Սրբուհի Գալյանին՝ հրաժեշտ տալով արդեն նախկին նախարար Գրիգոր Մինասյանին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հենց այս հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանը ներկաներին հավաստիացրել է, որ ինքը Գրիգոր Մինասյանին չի ստիպել հրաժարական տալ, դա Մինասյանի որոշումն է եղել: Փաշինյանն իր այս խոսքով հստակ ցույց է տվել, որ Գրիգոր Մինասյանի հրաժարականի դիմումն իր սրտով էլ չի եղել: ՔՊ-ում հիմա տարակուսած են. ստացվում է՝ Փաշինյանը թեեւ իր նախաձեռնությամբ վերջին պահին Սրբուհի Գալյանին «բերեց», նշանակեց նախարար, բայց դեռ Մինասյանի «գովքն է անում»: ՔՊ-ում չեն բացառում, որ Սրբուհի Գալյանը նույնպես ցանկացած պահի կարող է Փաշինյանի «սրտով» չլինել, ու նրան եւս հարմար պահի կարող է հեռացնել: Տեղեկության վերաբերյալ, իհարկե, «Ժողովուրդ» փորձեց մեկնաբանություն ստանալ. մենք կապ հաստատեցինք Գրիգոր Մինասյանի հետ, սակայն վերջինս կտրուկ հրաժարվեց որեւէ բան մեկնաբանելուց:

Հաջորդ շաբաթ խորհրդարանում թեժ է լինելու: Նոյեմբերի 12-ից մեկնարկում է ԱԺ հերթական նստաշրջանը: Նիկոլ Փաշինյանն ու գործադիրի անդամները կրկին կգնան խորհրդարան՝ մասնակցելու 2025 թվականի բյուջեի նախագծի քննարկմանը: Նախորդ շաբաթ այն քննարկվեց ԱԺ հանձնաժողովների համատեղ նիստերում. ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը դրական եզրակացություն տվեց 2025 թվականի պետական բյուջեի նախագծին: Արդեն հաջորդ շաբաթ բյուջեի նախագիծը պետք է քննարկվի ԱԺ լիագումար նիստերի ժամանակ, Նիկոլ Փաշինյանն ու գործադիրի անդամները եւս լինելու են խորհրդարանում՝ բյուջեի նախագծի քննարկմանը մասնակցելու համար: Բացի դրանից՝ նաեւ ընդդիմությունն է գերիների վերադարձի պահանջով ԱԺ նիստ հրավիրելու նախաձեռնությամբ հանդես եկել:



Վարչապետ Նիկոլ Փաշինյանը խուսափում է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի խուլիգանական վարքը մեկնաբանելուց: Բանն այն է, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հոկտեմբերի 31-ին ՀՀ Ազգային ժողովում հերթական անգամ խուլիգանական պահվածքով էր աչքի ընկել՝ լրագրողի հետ խոսելու ժամանակ: Նրա հայհոյանքները լսելի են եղել ողջ միջանցքով: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել էր, որ ԱԺ «Հայաստան» խմբակցության սենյակների հատվածում՝ դեպի ճաշարան տանող միջանցքում, MediaHub.am կայքի լրագրող Վահե Մակարյանի եւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի միջեւ տհաճ միջադեպ էր եղել, ինչել էին փոխադարձ հայհոյանքներ: Եվ ԱԺ-ում թիկնազորով շրջող ԱԺ նախագահի անվտանգության աշխատակիցները, «ավանդույթի համաձայն», բռնել էին լրագրող Վահե Մակարյանի ձեռքերը, հավանաբար, որպեսզի Սիմոնյանը հարվածի կամ թքի նրա վրա: Բայց, բարեբախտաբար, նման բան տեղի չէր ունեցել, թիկնազորը հարթել էր միջադեպը: «Ժողովուրդ» օրաթերթը հարցումով դիմել էր վարչապետին՝ խնդրելով պատասխանել հետեւյալ հարցերին. «31.10.2024 թվականին Ազգային ժողովի միջանցքում միջադեպ է տեղի ունեցել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եւ «Madiahub.am» լրատվական կայքի լրագրող Վահե Մակարյանի միջեւ. 1. Որպես կուսակցության ղեկավար՝ ի՞նչ քաղաքական գնահատական կտաք միջադեպի ընթացքում ԱԺ նախագահի պահվածքին՝ թիկնապահների միջոցով լրագրողի ձեռքերը բռնելուն, հայհոյելուն: 2. Որպես նախկին լրագրող՝ ի՞նչ վերաբերմունք ունեք այս միջադեպին՝ հաշվի առնելով քաղաքական գործչի եւ պետական պաշտոնյայի վերաբերմունքը ՁԼՄ ներկայացուցչի հանդեպ»: Ի պատասխան այս հարցմանը՝ Կառավարությունից ստացանք մեկ նախադասություն. «Ի պատասխան ձեր հարցման՝ հայտնում ենք, որ Ձեր կողմից բարձրացված հարցադրումները չենք մեկնաբանում»: Ստացվում է, որ Նիկոլ Փաշինյանը, դատապարտելով նախկիններին եւ նրանց մեղադրելով խուլիգանական, գողական պահվածք դրսեւորելու մեջ, հիմա, երբ վարչապետ է, չի փորձում զսպել իր կուսակցին: Ահա թե ինչպես է ձեւավորվում ժողովրդավարության բաստիոնը Հայաստանում. խրախուսվում է բռնությունը՝ ամենաբարձր մակարդակով:

ԶՐՈՒՅՑ

ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆԸ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Իշխանությունները 2026 թվականի ընտրություններին ընդառաջ փոփոխություններ է նախաձեռնել Ընտրական օրենսգրքում:

ԸՕ փոփոխությունների նախագիծն առաջին ընթերցմամբ արդեն իսկ ընդունվել է, առաջիկայում ԱԺ-ում երկրորդ ընթերցմամբ կընդունվի եւ կքննարկվի:

«Ժողովուրդ» օրաթերթը թեմայի վերաբերյալ զրուցել է ԱԺ նախկին պատգամավոր Անի Սամսոնյանի հետ:

-Տիկին Սամսոնյան, վստահաբար տեղյակ եք Ընտրական Օրենսգրքի փոփոխություններից, այն մասին, թե որ կետերն են փոխվելու: Շատ քննարկվեց այն հարցը, որ կարող է ընտրություն լինել, բայց կարող է արդյունքների հրապարակման պահին արտակարգ դրություն հայտարարվել: Ըստ Ձեզ՝ սա պարզապես փոփոխություն է, թե իշխանությունները հստակ նպատակ եւ միտում ունեն: Արդյոք ընտրություններից առաջ նախապես ապահովագրո՞ւմ են իրենց:

-Իշխանությունները հասկացել են, որ ընտրությունները կեղծելու կարողություն իրենք չունեն: Դա վեր է իրենց ուժերից: Եթե ընտրությունները կեղծելու այլ տարբերակներ ունենային, ապա, միանշանակ, կգնային դրան: Բայց միեւնույն ժամանակ նաեւ մտածել են, թե ինչպես է հնարավոր գողանալ մյուսների ձայները, որպեսզի անընդհատ նպաստեն իրենց վերարտադրությանը: Բերել են մի նախագիծ, որով այո՛, ընտրություններից հետո կարող են հայտարարել արտակարգ կամ ռազմական դրություն եւ չհարգել ընտրությունները, եթե իրենք ձայների մեծամասնությունը չեն հավաքել: Սա ուղիղ սպառնալիք է ժողովրդավարությանն ու ընտրական կարգին: Այսպիսի փոփոխություն կարող են իրականացնել միայն ավտորիտար իշխանություն ունեցող երկրները:

-Տիկին Սամսոնյան, Վենետիկի հանձնաժողովը այս նախագծի վերաբերյալ եւս բացասական եզրակացություն է տվել, ինչը, կարծես, ետ չի պահում իշխանություններին եւ առաջիկայում պետք է որ բերեն լիագումար նիստերում քննարկեն սա: Ստացվում է, որ միջազգային կազմակերպությունների արձագանքն էլ այլեւս չի ազդում:

-Այո՛, իշխանությունները կարծում են, որ նույնիսկ միջազգային կազմակերպություններին դեմ գնալը շատ էժան է նստելու մեզ վրա եւ ժողովուրդը այս հաշվով որեւէ ձայն չի հանելու ու սա որեւէ հետեւանք չի ունենալու մեզ համար: Քանի որ իրենք դրսի համար շատ հարմար իշխանություն են դարձել՝ թո՛ւ արեւմուտքի, թե՛ Ռուսաստանի Դաշնության, իրենք շատ հանգիստ են, որ այս «փոքրիկ» հակաժողովրդական վիճակը որեւէ հետեւանք չի ունենալու: Իրենց համար 2026 թվականին կամ ավելի շուտ վերարտադրվելը ավելի կարեւոր է, քանի Վենետիկի հանձնաժողովի կարծիքը հաշվի առնելը:

-Ստացվում է, որ իշխանությունն այլեւս իր ուժերի վրա վստահ չէ:

-Բնականաբար խոշոր քաղաքներում ընթացքող գործողությունները եւ ՔՊ-ի անկումը փաստող հարցումները իրենց վախեցնում են: Սակայն այստեղ պետք է նաեւ շատ լուրջ մտածել այն մասին, թե ինչպիսի արհեստական իրավիճակ կարող է ստեղծել իշխանությունը, եթե ընտրության արդյունքներն իրենց սրտով չլինեն: Այսինքն պե՞տք է սահմաններին լարված լինելու վերաբերյալ հայտարարություն անի: Մենք գիտենք, որ այս իշխանությունը հարմար է նաեւ Թուրքիային եւ Ադրբեջանին, ինչը նշանակում է, որ ամեն պահի կարող են օգնության հասնել այս հարցում: Բացի այդ կարող է ներսում իրարանցում ստեղծել՝ սահմանադրական կարգի պահպանման նպատակով արտակարգ դրություն հայտարարելու համար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԱՅՑԵԼԻ ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆԻՆ՝ ԻԲՐԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐ

Հակակոռուպցիոն դատարանում՝ դատավոր Վահե Դոլմազյանի նախագահությամբ, ընթացել է Հայաստանի հանրապետական կուսակցության (ՀՀԿ) փոխնախագահ Արմեն Աշոտյանի քրեական վարույթի քննության շրջանակում հերթական նիստը:

Արմեն Աշոտյանի փաստաբան Ռուբեն Մելիքյանն դատարանին միջնորդություն ներկայացրեց՝ թույլ տալ իր պաշտպանյալին տնային կալանքի պայմաններում հանդիպել Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանին:

«Հավատքի թեմայով ուզում եմ իմ հոգեւոր պրակտիկաները շարունակել Արշակ սրբազանի հետ», - բարձրաձայնեց Աշոտյանը:

Դատարանը բավարարեց միջնորդությունը եւ Աշակ սրբազանը կայցելի Արմեն Աշոտյանին:

ՈՐՈՇ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ ԵՐԵՎԱՆԻՆ ԴՐԴՈՒՄ ԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ. ԱԼԻԵՎ

Որոշ արեւմտյան երկրներ Երեւանին դրդում են նոր պատերազմի, ինչը աղետ կլինի Հայաստանի համար: Նման հայտարարություն է արել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

«Ես հայկական կողմին բազմիցս բացատրել եմ, որ չպետք է ենթարկվեն սադրանքների, բայց Հայաստանը շարունակում է զինվել: Մենք, տեսնելով դա, պետք է պատրաստ լինենք ցանկացած սադրանքների: Ադրբեջանի զինված ուժերը գտնվում են լիարժեք մարտական պատրաստության վիճակում»,- ասել է նա:

Ա. ԹԱԹՈՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հրավերով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Արման Թաթոյանը մասնակցել է Գերագույն հոգեւոր խորհրդի նոյեմբերի 6-ի ժողովին:

Ժողովին ներկայացրել է զեկույց Հայաստանում իրավական անվտանգության խնդիրների վերաբերյալ:

«Մասնավորապես, անդրադարձել եմ, այսպես կոչված, Սահմանազատման կանոնակարգին, ՀՀ սահմանադրական դատարանի սեպտեմբերի 26-ի որոշման խիստ մտահոգիչ դիրքորոշումներին՝ կապված Հայաստանի անկախության հռչակագրի նշանակության, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում Հայաստանի իրավական պարտավորությունների վտանգավոր ստորաբերման, ՀՀ պետական սահմանների անվտանգության հետ եւ այլն»,- գրել է նա Facebook-ի իր էջում:

ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱՅԻՑ 4 ՏԱՐԻ ԱՆՑ. ԻՆՉ ՈՒՆԵՆՔ

7. Ներքին տեղահանված անձինք եւ փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք եւ հարակից շրջաններ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո:

8. Կատարվում է ռազմագերիների եւ այլ ձերբակալված անձանց ու զոհվածների դիակների փոխանակում:

9. Տարածաշրջանում բացվում են բոլոր տնտեսական եւ տրանսպորտային կապերը: Հայաստանի Հանրապետությունն ապահովում է տրանսպորտային հաղորդակցությունը Ադրբեջանի Հանրապետության արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ՝ երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների անարգել երթեւեկություն կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային հաղորդակցության վերահսկողությունն իրականացնում են Ռուսաստանի ԱԴԾ Սահմանապահ ծառայության մարմինները: Կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունը Ադրբեջանի արեւմտյան շրջանների հետ կապող նոր տրանսպորտային հաղորդակցությունների կառուցումը»:

Եռակողմ հայտարարության 1-ին կետը խախտվել է՝համաձայն ՊՆ-ի կողմից արձանագրված փաստերի: Ռազմական գործողությունների ժամանակ ադրբեջանական զինված ուժերին հաջողվել էր գրավել Հադրութի շրջանի բոլոր բնակավայրերը բացառությամբ Խծաբերդ եւ Հին թաղեր գյուղերի: Ըստ համաձայնագրի՝դրանք պետք է մնային հայկական ուժերի վերահսկողության ներքո. սակայն դեկտեմբերի 12-ին ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումները հարձակում իրականացրին երկու գյուղերի ուղղությամբ, ինչի արդյունքում դրանք նույնպես անցան Ադրբեջանի վերահսկողության տակ: Նույն գործողության ընթացքում գերեվարվեց 62 զինծառայող:

3-րդ կետի վերաբերյալ սկանդալը հասունացավ ստորագրումից 4 տարի անց: Հայաստանի լարված հարաբերություններն այնքան լարվեցին Ռուսաստանի Դաշնության հետ, որ ՌԴ իշխանությունները որոշեցին ռուս խաղաղապահներին հետ կանչել Մոսկվա, եւ Լաչինի միջանցքում արդեն տեւական ժամանակ է խաղաղապահներ չկան: Համաձայնագրի 4-րդ կետի համաձայն՝ խաղաղապահները պետք է Լաչինի միջանցքում մնային 5 տարի, այնինչ նրանք, անգամ 4 տարին չլրացած, հեռացան Հայաստանից:

Հարկ է նշել, որ 5-րդ կետի վերաբերյալ 2020 թվականի նոյեմբերի 11-ին Թուրքիան եւ Ռուսաստանը ստորագրեցին Ղարաբաղում հրադադարի վերահսկման եւ մոնիթորինգի՝ ռուս-թուրքական համատեղ կենտրոն ստեղծելու փոխըմբռնման հուշագիրը: 2021-ի սկզբին Աղդամում տեղակայվեց ռուս-թուրքական մոնիթորինգային կենտրոնը, որ հետագայում՝ 2024 թվականի ապրիլի 26-ին, փակվեց: Այսինքն՝ սա եւս մեկ ձախողում է եռակողմ պայմանագրի չկատարման հարցում:

Համաձայնագրի 6-րդ կետը ոչ մի կերպ իրականացված չէ, քանի որ ստորագրումից 3 տարի անց Ադրբեջանի ձեռնարկած լայնածավալ պատերազմական գործողությունները 2023 թվականի սեպտեմբերին ամբողջությամբ շրջեցին Արցախի պատմության էջը: Ադրբեջանը չկատարեց իր պարտավորությունները, իսկ Հայաստանի իշխանությունները լուռ ու համր համակերպվեցին Արցախի Հանրապետությունից հայ բնակիչների բռնի տեղահանմանը:

7-րդ կետով սահմանված եւ հաստատված՝ տեղահանվածների վերադարձը պատերազմից հետո մասամբ կատարվեց, սակայն Արցախ վերադարձած քաղաքացիներին Ադրբեջանի իշխանությունները դատապարտեցին սովի՝ գրեթե մեկ տարի նրանց պահելով բլոկադայի մեջ:

8-րդ կետը մնացել է մասամբ իրականացված, քանի որ պատերազմից հետո վերադարձած գերիներից զատ՝ հաստատված 80 գերիներ դեռ Հայաստան չեն վերադարձել: Տարբեր նկարների եւ տեսանյութերի միջոցով նույնականացված զինծառայողների Բաքվում գտնվելը թշնամիները հերքում են, անգամ դիակներ դեռ չեն վերադարձվել: Այս իրավիճակից հետո, 80 հաստատված գերիներից բացի, Ադրբեջանը 2023 թվականի ռազմական գործողություններից հետո առեւանգեց նաեւ Արցախի բարձրաստիճան 8 պաշտոնյայի:

Համաձայնագրի 9-րդ կետի վերաբերյալ Հայաստանն ու Ադրբեջանը մինչեւ այսօր համաձայնության չեն եկել: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ասում է, որ Ադրբեջանը համաձայն չէ, որ հայկական կողմը չպետք է ապահովի ենթակառուցվածքների անվտանգությունը:

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կռվախնձորը եռակողմ համաձայնագրի վերաբերյալ դեռեւս չի հանդարտվել: Իսկ ՀՀ իշխանությունները դադարել են եռակողմ համաձայնագրի լուծման մասին հայտարարություններ անել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՄՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԹԱՆԿԱՐԺԵՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄՆ-ի ներկայիս ընտրությունները պատմության մեջ ամենաթանկարժեքն են, գրում է Finanձial Tiշes պարբերականը՝ մանրամասնելով, որ թեկնածուներ Դոնալդ Թրամփը եւ Քամալա Հարրիսն իրենց նախընտրական քարոզարշավների վրա 3,5 միլիարդ դոլար են ծախսել:

Հարրիսը հավաքել է ավելի քան 2,3 միլիարդ դոլար՝ ծախսելով 1,9 միլիարդ դոլար, իսկ Թրամփը՝ 1,8 միլիարդ դոլար եւ ծախսել 1,6 միլիարդ դոլար, գրում է թերթը:

Ըստ հրապարակման՝ գումարի կեսից ավելին ուղղվել է գովազդին, այնուհետեւ գալիս են վարչական ծախսերը՝ Հարրիսինը՝ 250 մլն դոլար, Թրամփինը՝ 200 մլն դոլար:

FT-ն պարզել է նաեւ, որ հանրապետական թեկնածուն ծախսել է ավելի քան 100 մլն դոլար (բոլոր միջոցների 14%-ը) իրավաբանական ծախսերը հոգալու համար:

Նշենք, որ Թրամփն իրեն հայտարարել է ընտրությունների հաղթող: Համաշխարհային առաջնորդները նրան շնորհավորել են:

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ԵՎ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ եւ լիազոր դեսպան Քրիստինա Քվինին:

Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ կառավարությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հայ-ամերիկյան երկկողմ հարաբերությունների օրակարգային հարցերը, մտքեր են փոխանակվել տարածաշրջանային զարգացումների շուրջ:

ԵՎՐՈՊԱՆ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ԱՄՆ ԳԼԽԱՎՈՐ ՄՐՑԱԿԻՑԸ. ԼՈՒԿԱՇԵՆԿՈ

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն կարծում է, որ Եվրոպան կարող է դառնալ ԱՄՆ-ի գլխավոր մրցակիցը: Այս մասին հաղորդում է BelTA գործակալությունը:

«Աշխարհը սարսափելիորեն փոխվում է, վաղը իրավիճակը բոլորովին այլ կլինի, ոչ թե Չինաստանը կարող է լինել Ամերիկայի գլխավոր մրցակիցը, այլ Եվրոպան»,- ասել է Լուկաշենկոն:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԲՈՅԿՈՏԵԼՈՒ COP-29

Շուրջ երեք տասնյակ ֆրանսիացի գործիչներ հավաքական ուղերձ են հրապարակել՝ Ֆրանսիայի կառավարությանը կոչ անելով բոյկոտել Բաքվում կայանալիք COP-29 համաժողովը:

Գործիչների ուղերձը հրապարակել է Le Figaro պարբերականը:

«Ֆրանսիայի Հանրապետության հարգելի ընտրված ներկայացուցիչներ, մենք՝ այս խնդրագիրը ստորագրողներս, կոչ ենք անում կառավարությանը վճռական եւ խորհրդանշական գործողություններ ձեռնարկել՝ բոյկոտելու COP29-ը, որը տեղի կունենա Բաքվում նոյեմբերի 11-ից: Խորհրդարանական բոլոր խմբակցությունների ներկայացուցիչների կողմից արդեն դատապարտված այս համաժողովի անցկացումը չպետք է նպաստի Ադրբեջանի ավտոկրատ եւ կոռումպացված ռեժիմի օրինականացմանը կամ խրախուսի նրա ծավալապաշտական ու ապակայունացնող հավակնությունները:

Միջազգային այս կարեւոր իրադարձության մոտենալով՝ Ադրբեջանի իշխանությունները միայն ուժեղացնում են ռեպրեսիաները ներքին ընդդիմության նկատմամբ եւ նոր սպառնալիքներ հնչեցնում Հայաստանի դեմ: Այդ մասին են վկայում Huշan Rights Watձh-ի եւ Freedoշ Now-ի զեկույցները, որոնք հոկտեմբերի 8-ին հրապարակել են հայտարարություններ ադրբեջանական վարչակարգի՝ «քաղաքացիական հասարակությանը ոչնչացնելու» փորձերի մասին:

Պակաս ցուցիչ չէ Իլհամ Ալիեւի դիրքորոշումն, ով, խախտելով 2020 թվականի նոյեմբերի 9-ի հրադադարի համաձայնագրի բոլոր կետերը, 2023 թվականի սեպտեմբերին էթնիկ զտումներ է իրականացրել Ղարաբաղում, անընդհատ բարձրացնում է խաղադրույքները խաղաղ բանակցություններում», - նշել են ուղերձի հեղինակները՝ հավելելով, որ COP29-ի անցկացումը, հակառակ սպասելիքների, միայն ամրացնելու է Ադրբեջանի իշխանություններին:

Ուղերձում նրանք հարց են հնչեցնում, թե կարելի՞ է արդյոք խոսել բնապահպանական խնդիրների մասին՝ անտեսելով տասնյակ քաղբանտարկյալների, այդ թվում՝ հայ բարերար Ռուբեն Վարդանյանի եւ եւս 22 հայ պատանդների ազատ արձակման կոչերը, որոնք խոշտանգումների են ենթարկվում համաժողովի անցկացման վայրից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա:

«Այս կոչը ստորագրողները կարծում են, որ ո՛չ», - ընդգծվում է ուղերձում:

Նրանք իրենց վրդովմունքն են արտահայտում Ֆրանսիայի կառավարության որոշման կապակցությամբ, որի համաձայն՝ համաժողովին Ֆրանսիան ներկայացնելու է բնապահպանության նախարար Անյես Պանիե-Ռունաշեին, հատկապես հաշվի առնելով, որ Ֆրանսիան արձանագրել է Ադրբեջանում իր քաղաքացիների անհիմն ձերբակալության երկու դեպք, եւ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունն արդեն իսկ սեպտեմբերի 4-ին նախազգուշացրել է իր քաղաքացիներին հրաժարվել Ադրբեջան մեկնելուց:

Գործիչները Ֆրանսիայի կառավարությանը կոչ են անում հստակ ուղերձ հղել Ալիեւի ռեժիմին՝ բոյկոտելով COP29-ը եւ ղեկավարելով հայ պատանդների անհապաղ եւ անվերապահ ազատման միջազգային արշավը, ապահովելով Լեռնային Ղարաբաղից 120,000 փախստականների անվտանգ վերադարձի իրավունքը եւ պաշտպանելով Հայաստանի տարածքային ամբողջականությունը, որի տարածքների մի մասը մինչ օրս օկուպացված են Ադրբեջանի կողմից:

Կոչը ստորագրել են՝ Ալեն Իդալգոն՝ Փարիզի քաղաքապետ (Սոցիալիստական կուսակցություն), Այդա Հադիզադեն՝ Վալ դ՛Ուազից ընտրված պատգամավոր (Սոցիալիստական կուսակցություն), Շառլ դը Կուրսոնը՝ Մառնից ընտրված պատգամավոր (Ցենտրիստներ՝ նոր կենտրոն), Քրիստին Պիրես Բոնը՝ Պույ-դը-Դոմից ընտրված պատգամավոր (Սոցիալիստական կուսակցություն), Կլոդ Կերնը՝ Բա-Ռենի սենատոր (Դեմոկրատների եւ Անկախների միություն), Էլիզա Մարտենը՝ Իզերից ընտրված պատգամավոր (Չհանձնվող Ֆրանսիա), Էմանուել Գրեգուարը՝ Փարիզի 7-րդ ընտրատարածքի պատգամավոր (Սոցիալիստական կուսակցություն), Ֆրանսուա-Գզավյե Բելամին՝ Եվրախորհրդարանի պատգամավոր (Հանրապետականներ), Իզաբել Սանտյագոն՝ Վալ-դը-Մարնից ընտրված պատգամավոր (Սոցիալիստական կուսակցություն), Լորան Պանիֆուսը՝ Արիեժից ընտրված պատգամավոր, Լորան Վոքիեն՝ Օտ-Լուարից ընտրված պատգամավոր (Հանրապետականներ) եւ այլ գործիչներ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԸ ՉԻ ԿԱՅԱՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Գյումրու ավագանու արտահերթ նիստը քվորումի բացակայության պատճառով այսօր չի կայացել: Նշենք, որ արտահերթ նիստը համայնքապետ ընտրելու օրակարգով էր, ավագանին պետք է իր անդամներից թեկնածու առաջադրեր եւ համայնքապետ ընտրեր, սակայն այսօր ՔՊ-ն, որը Գյումրու ավագանիում մեծամասնություն է, հայտարարեց, որ համայնքապետ չեն ընտրելու: Ըստ օրենքի՝ եթե մինչեւ աշնանային նստաշրջանի ավարտը կամ քվորումի բացակայությամբ նիստ չի կայանում, կամ կայանում է, բայց համայնքի ղեկավար չի ընտրվում, ապա ավագանին լուծարվում է:

ՔՊ-ն նաեւ հայտարարել է, որ Գյումրիում արտահերթ ընտրություններ կլինեն, իսկ իշխող ուժի թեկնածուն պատգամավոր Կարեն Սարուխանյանն է:

«Ժողովուրդ» օրաթերթ-ը գրել էր. «Քաղաքապետ Վարդգես Սամսոնյանի անակնկալ հրաժարականից հետո, փաստացի, համայնքը ղեկավար չունի:

Այսօր ՀՀ երկրորդ քաղաքի ավագանին նոր համայնքապետի ընտրության օրակարգով նիստ է հրավիրել:

ՏԻՄ օրենքի համաձայն՝ ավագանու նիստը համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալի որոշմամբ է հրավիրվում, սակայն քաղաքապետ Վարդգես Սամսոնյանը հոկտեմբերի 27-ին ՔՊ-ի ճնշումների ներքո հրաժարական տվեց, փոխքաղաքապետ Սուրեն Ջանոյանն էլ տնային կալանքի տակի է, չկա նիստ հրավիրողը. աշխատակազմի քարտուղարն իրավասու չէ նիստ հրավիրելու: Բայց այս պայմաններում, ամեն դեպքում, այսօր արտահերթ նիստ է հրավիրված. այն կկայանա եթե ավագանու 17 անդամ ներկա լինի: Եթե կամ քվորումի բացակայությամբ նիստը չկայանա, կամ կայանա, բայց համայնքի ղեկավար չընտրվի, ապա ավագանին կլուծարվի: Իշխանությունները հակված են նաեւ Գյումրիում արտահերթ ընտրությունների գնալ: Ինչպես ՔՊ-ն հայտարարել է՝ իր թեկնածուն պատգամավոր, Շիրակի նախկին մարզպետ Կարեն Սարուխանյանն է: Կարող ենք արդեն կանխատեսել ՔՊ-ի ծրագիրը. ավագանու միջոցով տապալել համայնքապետի ընտրությունը, որպեսզի Սարուխանյանը նշանակվի ԺՊ»:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԺԱՄԱՆԱԿ Է ՊԵՏՔ

Հայաստանը մտադրված է համագործակցել ՌԴ-ի հետ, իսկ ՀԱՊԿ-ին անդամակցության հարցը ժամանակի ընթացքում ավելի պարզ կդառնա: Այս մասին «Վալդայ» ֆորումի շրջանակում ասել է նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը:

«Հայ հասարակության մեջ այժմ տարբեր դիրքորոշումներ կան. ղարաբաղյան պատերազմից հետո Հայաստանի դիրքորոշումներում տեկտոնական փոփոխություններ են տեղի ունեցել օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով: Հայ ժողովրդին ժամանակ է պետք՝ իր համար նոր ռազմավարական որոշումներ կայացնելու համար», - ասել է Սարգսյանը: Նշենք, որ այս պահին Տիգրան Սարգսյանը զբաղեցնում է Եվրասիական զարգացման բանկի խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնը:

ԿԱ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնում քննվող քրեական վարույթի նախաքննությամբ պարզվել են Երեւանի 40-ամյա բնակչի կողմից իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքի մի շարք հանգամանքներ:

Քրեական վարույթի շրջանակներում 2024թ. նոյեմբերի 5-ին ապօրինի թմրամիջոց պահելու, օգտագործելու եւ իրացնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալվել է ՀՀ Արարատի մարզում գործող հյուրանոց-ռեստորաններից մեկում որպես մատուցող աշխատող անձը, ում անձնական խուզարկությամբ հայտնաբերվել էր, ըստ իր հայտարարության, «Կրիստալ» տեսակի թմրամիջոց:

Ձեռնարկված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ հիշյալ անձը նշված թմրամիջոցի նմանվող զանգվածը՝ 2,42 գրամ քաշով, ձեռք է բերել նույն հյուրանոց-ռեստորանի աշխատակից՝ Երեւանի 40-ամյա բնակչից: Կատարված փորձաքննությամբ հաստատվել է, որ նշված զանգվածը «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց է:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ 40-ամյա տղամարդը, շահադիտական դրդումներով թմրամիջոց իրացնելու նպատակով, Իրանի Իսլամական Հանրապետության՝ դեռեւս ինքնությունը չպարզված քաղաքացուց ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերով՝ հիշյալ թմրամիջոցը, որը իրացման նպատակով, գրեթե հավասար քաշերով, փաթեթավորել է երեք տարբեր փաթեթներում: 2024թ. նոյեմբերի սկզբներին 40-ամյա տղամարդը հիշյալ թմրամիջոցը, փաթեթներում փաթեթավորված վիճակում, գումարի դիմաց, Մասիս համայնքի վարչական տարածքում ապօրինի իրացրել է իր գործընկերոջը, որն էլ նոյեմբերի 5-ին հայտնաբերվել եւ վերցվել է վերջինիս անձնական խուզարկությամբ:

Երեւանի 40-ամյա բնակչի աշխատավայրում կատարված խուզարկությամբ հայտնաբերվել է մեծ քանակի, մասնավորապես՝ ընդհանուր 772գ «Մարիխուանա» տեսակի, 559գ «Հաշիշ» տեսակի եւ 274գ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցների նմանվող զանգվածներ՝ փաթեթավորված վիճակում, ինչպես նաեւ բազմաթիվ զիպ փականներ, կշեռքներ: Հայտնաբերված զանգվածների բնույթն ու կոնկրետ քաշերը պարզելու նպատակով նշանակվել է համապատասխան փորձաքննություն:

Բացի այդ, նշված անձի բնակարանում կատարված խուզարկությամբ հայտնաբերվել եւ առգրավվել է ընդհանուր շուրջ 500 փաթեթ առանց ակցիզների, տեղական եւ արտերկրյա արտադրության տարբեր տեսակի ծխախոտների տուփեր:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա 40-ամյա տղամարդու նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում: Վերջինս ձերբակալվել է՝ դատարան ներկայացնելու հիմքով եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Նախաքննությունը շարունակվում է: Միջոցներ են ձեռնարկվում ինչպես թմրամիջոցների, այնպես էլ հայտնաբերված անակցիզ ծխախոտների ձեռքբերման աղբյուրները, թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ հնարավոր այլ անձանց ներգրավվածությունը պարզելու նպատակով:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ Քննչական կոմիտե

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

«ՀԱՄԱՐՁԱԿ ՏՂԱ» ԴԱՏԱՎՈՐԻ ՈՒՆԵՑՎԱԾԸ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ Է

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ առաջին անգամ գործող դատավորի դեմ ապօրինի գույքի բռնագանձման գործով հայցադիմում է ներկայացվել դատարան: Արտուշ Գաբրիելյանի ունեցվածքը կալանքի տակ է: Ասել է, թե իշխանության սրտի դատավորը, որը օրերս կարգապահական պատասխանատվության ենթարկվեց, իրավապահների տեսադաշտում է: Հիշեցնենք, որ «Սասնա ծռերի» գործով դատավորը համարձակվեց «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Վահագն Հարությունյանի մասով որոշում կայացնել, նրա խափանման միջոցը ընտրել կալանավորումը: Նրա այս քայլի համար Գաբրիելյանին դատական համակարգում որակեցին «համարձակ տղա»:

Նշենք, որ Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 15-ին վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արտուշ Գաբրիելյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

5 անշարժ գույք.

4 տրանսպորտային միջոց.

1 իրավաբանական անձում մասնակցություն.

62 միլիոն 811 հազար դրամ.

1 բնակելի տան միջին շուկայական արժեքի չափով գումար:

ԿԱԼԱՆԱՎՈՐԸ ՓՈՐՁԵԼ Է ՎԵՐՋ ՏԱԼ ԿՅԱՆՔԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արթիկի բանտում կալանավորը նոյեմբերի 4-ին՝ ժամը 14:10-ին, փորձել է ինքնասպանություն գործել՝ սավանով խցի առաստաղի լուսամուտի ճաղերից կախվելով: Այդ պահին նկատել են քրեակատարողական ծառայության աշխատակիցները, շտապ բացել են խցի դռները եւ փրկել են կալանավորի կյանք:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ կալանավորը ասել է, որ ինքը կալանավայրի կյանքի եւ իր կարգավիճակի հետ չի կարող համակերպվել, դրա համար ավելի լավ է մահանա: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջինս 39 տարեկան է, նրա կյանքին վտանգ չի սպառնում:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍ ԵՎ ԱՅԼ ԱՐԳԵԼՎԱԾ ԻՐԵՐ՝ ՔԿՀ ԹԱՔՍՏՈՑԻՑ

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Սեւան» տարածքային բաժնի ծառայողները տեղեկություններ էին ստացել այն մասին, որ փորձ է արվելու դատապարտյալին հանձնուքի միջոցով մեծ քանակությամբ արգելված իրեր փոխանցել:

Իրացնելով ստացված տեղեկությունները՝նույն տարածքային բաժնի ծառայողները ՀՀ ԱՆ «Սեւան» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի ծառայողների հետ միասին նոյեմբերի 7-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, զննության են ենթարկել քաղաքացու կողմից դատապարտյալ Մ.Հ.-ի անվամբ որպես հանձնուք բերված սառնարանը:

Զննությամբ ծառայողները սառնարանի վերեւի հատվածում հնարամտորեն պատրաստված թաքստոցից հայտնաբերել են կպչուն ժապավեններով եւ շինարարական փրփուրով փաթեթավորված 34 բջջային հեռախոս, 30 USB լար, 5 ականջակալ, 5 բաժանորդային քարտ եւ լիցքավորման սարքի 3 գլխիկ:

Դեպքի առթիվ նախաձեռնվել է վարչական վարույթ:

Քրեակատարողական ծառայությունը հորդորում է պատասխանատվության չենթարկվելու համար զերծ մնալ անօրինական գործողություններից եւ խստագույնս պահպանել քրեակատարողական հիմնարկներ այցելելու՝օրենքով սահմանված պահանջները:

ԿԱՆԽՎԵԼ Է «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՔԿՀ ԱՐԳԵԼՎԱԾ ԻՐԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Նուբարաշեն» տարածքային բաժնում ստացված տեղեկությունների հիման վրա նոյեմբերի 6-ին՝ ժամը 17:10-ի սահմաններում, բժշկական կենտրոնից ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ վերադարձված կալանավորված անձ Վ.Հ.-ն, մինչ բնակելի գոտի մուտք գործելը, ենթարկվել է անձնական խուզարկության:

Քրեակատարողական ծառայողները Վ.Հ.-ի բերանի խոռոչից հայտնաբերել են երկու առանձնացված փաթեթներ, որոնցից մեկում առկա է եղել թմրամիջոցի նմանվող, 47 գրամ քաշով, սպիտակ, բյուրեղանման զանգված, իսկ երկրորդում՝ թմրամիջոցի նմանվող, 7 գրամ քաշով, շագանակագույն զանգված: Բացի դրանից՝ նրա ներքնաշորի միջից հայտնաբերվել է բջջային հեռախոս:

Հայտնաբերված նյութերը ուղարկվել են ՀՀ ՔԿ Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 7-ից 8-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 106 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱԶԴԱՐԱՐՄԱՆ 85 ՍԱՐՔԵՐ Է ՏՐԱՄԱԴՐԵԼ

Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ նոյեմբերի 6-ին մարզպետ Հայկ Ղալումյանն ընդունել է Երեւանի առաջին փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանի գլխավորած աշխատանքային խմբին՝ քննարկելու համայնքային անվտանգության եւ զարգացմանն ուղղված առաջնահերթ ծրագրեր: Մարզպետ Ղալումյանը կարեւորել է Երեւանի քաղաքապետարանի կողմից Տավուշի մարզին ցուցաբերված աջակցությունը՝մասնավորապես 85 ազդարարման սարքերի տրամադրումը, որոնք նպաստելու են համայնքային անվտանգության եւ արագ արձագանքման կարողությունների ամրապնդմանը: Փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանը նշել է, որ 85 ազդարարման սարքերի նվիրաբերումը ընդամենը առաջին քայլն է, քաղաքապետարանը պատրաստ է համագործակցել նաեւ այլ նախաձեռնությունների շուրջ, որոնք ուղղված կլինեն համայնքների անվտանգության մակարդակի բարձրացմանը եւ բնակչության պաշտպանվածության ապահովմանը: Երեւանի քաղաքապետարանը փոխանակ օգնի Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում, այդ բնակավայրերի դպրոցներում ռմբապաստարաններ սարքելու, ազդարարման սարքեր է տրամադրել, այդ սարքերը ինքնին սահմանամերձ գոտու բնակիչների անվտանգությունը, բնակչության պաշտպանվածություն չեն ապահովի: Մարզի շատ բնակավայրերում տեղադրված են արտակարգ իրավիճակների մասին բնակիչներին ազդարարող շչակներ:

ԳՈՆԵ ԱՍՖԱԼՏԻ ԾԱԾԿԸ ՆՈՐՈԳԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել Դիլիջան-Սեւան ավտոմոբիլային թունելի նորոգման ժամկետի մասին: Մարզպետարանից պատասխանել են. «Դիլիջան-Սեւան ավտոմոբիլային թունելն ամբողջությամբ նորոգվելու է 2025 թվականին»: Մինչեւ թունելն ամբողջությամբ նորոգելը,խիստ հարկ է թունելի ասֆալտի ծածկը նորոգել, որը հատկապես թունելի հյուսիսային մասում անհարթ է, խորդուբորդ:

6 ԴՊՐՈՑՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԵՐԿԿՈՄՊԼԵԿՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցներից 6-ում գործում են երկկոմպլեկտ դասարաններ, մարզի դպրոցներում եռակոմպլեկտ դասարաններ չկան: Երկկոմպլետ դասարաններ են գործում մարզի հետեւյալ դպրոցների նշված դասարաններում՝ Աճարկուտի հիմնական դպրոցում (1-ին եւ 3-րդ դասարաններ), Դեղձավանի հիմնական դպրոցում (1-ին եւ 2-րդ), Այգեպարի միջնակարգ դպրոցում(11-րդ եւ 12-րդ), Բարեկամավանի միջնակարգ դպրոցում(1-ին եւ 2-րդ), (3-րդ եւ 4-րդ),(10-րդ եւ 11-րդ), Իծաքարի հիմնական դպրոցում (3-րդ եւ 4-րդ), (5-րդ եւ 6-րդ), (7-րդ եւ 9-րդ):

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՍՏԱԿԵՑՈՒՄՆԵՐ...

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանը ներկայացրեց արտակարգ եւ ռազմական դրության պայմաններում ընտրական գործընթացի կազմակերպման եւ վերահսկման հետ կապված բարեփոխումները, որոնք նախատեսվում են Ընտրական օրենսգրքում սպասվող փոփոխություններով:

Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից հրավիրված խորհրդարանական լսումների ժամանակ Հարությունյանը նշեց, որ ընտրական օրենսգրքում ներկայիս կարգավորումը պահանջում է ընտրությունները հետաձգել կամ վերաքվեարկություն անցկացնել արտակարգ եւ ռազմական դրության ընթացքում, սակայն կարգավորված չեն մի շարք մանրամասներ՝ կապված արտակարգ դրության հայտարարման պահից սկսած որոշակի իրավիճակների հետ: Հարությունյանն ասաց, որ նոր փոփոխություններով նախատեսվում է հստակեցնել արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում ընթացող ընտրությունների կազմակերպումը եւ վերահսկումը՝ նվազեցնելով ընտրական գործընթացների վրա նման դրությունների ազդեցությունը:

«Նպատակը ոչ թե խնդիրներ առաջացնելն էր, այլ հակառակը՝ հնարավոր խնդիրների լուծումը, որպեսզի ընտրական գործընթացը չտուժի եւ ընտրողների ձայնը տեղ հասնի»,- շեշտեց Հարությունյանը:

Նա հավելեց, որ այս փոփոխությունները քննարկվել են ընդդիմության հետ, եւ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը մշակել է փոփոխությունների առավել ընդունելի տարբերակը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության փոխնախագահ Դավիթ Խաժակյանը հարց ուղղեց Արդարադատության նախարարի տեղակալին՝ շեշտադրելով այն մտահոգությունը, որ հետընտրական ցնցումների դեպքում կառավարությունը կարող է արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարել՝ վերաքվեարկություն պարտադրելով: Նա հարցրեց, թե արդյոք նման իրավիճակում կառավարությունը չի՞ ունենա հնարավորություն՝ կիրառելու արտակարգ դրություն՝ ընտրությունների արդյունքների զրոյացման նպատակով:

Հարությունյանը պարզաբանեց, որ փոփոխությունները մշակված են այնպես, որ ապահովվի ընտրական գործընթացի անխափան շարունակությունը՝ առանց քվեարկության ավարտված փուլերի զրոյացման:

Նախարարի տեղակալը նշեց, որ արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարելու պահից սկսած՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարող է կասեցնել ընտրությունները, սակայն եթե դրությունը հայտարարվում է քվեարկության օրվա ավարտից հետո՝ ժամը 20:00-ից հետո, ապա նախնական արդյունքների ամփոփումը կարող է շարունակվել, իսկ նոր քվեարկություն նշանակվելու է միայն այն տեղամասերում, որտեղ նման անհրաժեշտություն կառաջանա:

Նախագծով նախատեսված են նաեւ փոփոխություններ, որոնք կապահովեն ընտրական փաստաթղթերի պատշաճ պահպանումը՝ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանված կարգով պետք է վերահսկի եւ պահպանի ընտրական փաստաթղթերը՝ ապահովելով դրանց ամբողջականությունն ու անվտանգությունը, ինչն իր հերթին թույլ կտա անհրաժեշտության դեպքում վերսկսել ընտրական գործընթացն՝ առանց իրավական խոչընդոտների:

ԸՆԹԱՑԻԿ

«Nissan»–Ը ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ճապոնական ավտոարտադրող «Nissan» ընկերությունը մտադիր է աշխատանքից ազատել մոտ 9 հազար աշխատակցի, ինչպես նաեւ 20 տոկոսով կրճատել արտադրական հզորությունները, հայտնում է Bloo2berg-ը:

Պարբերականի տվյալներով ՝ ճապոնական ապրանքանիշի խնդիրները պայմանավորված են վաճառքների նվազմամբ, ինչպես նաեւ էլեկտրամոբիլների շուկայում Tesla-ի եւ BYD-ի հետ մրցակցությամբ:

«Nissan»-ը կանխատեսում է այս ֆինանսական տարվա գործառնական շահույթի կրճատում՝3,23 մլրդ դոլարից հասնելով 972 մլն դոլարի:

Ընկերությունը նաեւ որոշել է վաճառել մեկ այլ ավտոարտադրողի՝ «Mitsubishi Motors Corp»-ի բաժնետոմսերի 10%-ը, որն այժմ կազմում է 34%:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է մշտական բնակչության վերաբերյալ տեղեկագիր: Ըստ ամփոփագրի՝ 2024 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչությունը կազմում է 3 մլն 67 հազար մարդ:

Ամենախիտ բնակեցված համայնքը մայրաքաղաքն է: Երեւանում ապրում է 1 մլն 136 հազար մարդ: Վարչական շրջաններից առավել շատ բնակչություն ունեն Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Էրեբունի վարչական շրջանները: Ամենաքիչ բնակեցված վարչական շրջանը Նուբարաշենն է: Վիճակագրական տվյալների համաձայն՝ այստեղ ապրում է 12 հազար մարդ:

Մարզերը եւս աչքի են ընկնում բնակչության անհավասար բաշխվածությամբ: Բնակչության կենտրոնացվածությամբ առաջին տեղում Կոտայքի մարզն է՝ 292 հազար քաղաքացի: Խիտ բնակեցվածությամբ առանձնանում են նաեւ Երեւանին առավել մոտ գտնվող մարզերը՝Արարատը եւ Արմավիրը: Ամենանոսր բնակեցված մարզը Հայաստանի ամենափոքր մարզն է՝ Վայոց ձորը՝49 հազար մարդ:

Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի բնակչությունն առավելապես կենտրոնացված է քաղաքային բնակավայրերում՝1 մլն 976 մարդ:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1–7–Ը ՀԱՎԱՔԱԳՐՎԵԼ Է 213 ՄԼՆ ԴՐԱՄ

Նոյեմբերի 1-ից 7-ն ընկած ժամանակահատվածում «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից հավաքագրվել է 213 173 300 ՀՀ դրամ, որից 57 802 200 ՀՀ դրամը՝էլեկտրոնային վճարումներով: Այս մասին իր էջում տեղեկացրել է Երեւանի քաղաքապետի մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանը: «Հավելեմ որ, նոյեմբերի 1-ին նախորդող 7 օրերին հավաքագրումը կազմել է 188 474 600 ՀՀ դրամ»,-նշել է Կոստանյանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 22 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գործադիրը սահմանել է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող մաքսային հսկողության գոտիներում առեւտրային գործունեություն եւ անմաքս առեւտրի խանութներում գործունեություն իրականացնելու թույլտվության տրամադրման մրցույթի իրականացման կարգը: Որոշման կարգավորման առարկան՝ «Մաքսային կարգավորման մասին» օրենքի հիման վրա պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող մաքսային հսկողության գոտիներում առեւտրային գործունեության՝ մրցույթի հիման վրա իրականացման կարգավորումների սահմանումն է: Որոշման ընդունմամբ ակնկալվում է մաքսային հսկողության գոտիներում իրականացվող գործունեության իրականացման արդյունավետության եւ մաքսային գործառնությունների անխափան իրականացման հնարավորություն:

Մասնավորապես նախատեսվում է սահմանել՝ 1. մաքսային հսկողության գոտիներում առեւտրային գործունեություն իրականացնող անձանց շրջանակը,2. մաքսային հսկողության գոտիներում առեւտրային գործունեության իրականացմանը ներկայացվող պահանջները, 3. մաքսային հսկողության գոտիներում առեւտրային գործունեության իրականացման մրցույթի կազմակերպման եւ անցկացման կարգը:

ՔԱՋԱՐԱՆ-ԱԳԱՐԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանն ընդունել է Կայունացման եւ զարգացման Եվրասիական հիմնադրամի պատվիրակության անդամներին, որոնք Հայաստան են ժամանել՝ հետեւելու Հյուսիս-հարավ ճանապարհի Տրանշ-4-ի Քաջարան-Ագարակ 32կմ հատվածի շինարարության ընթացքին:

Հանդիպմանը մասնակցում էին նաեւ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Կարեն Բաղալյանը, հիմնադրամի աշխատակիցներ:

Հիշեցնենք, որ նշված հատվածը կառուցվում է ՀՀ կառավարության եւ Կայունացման եւ զարգացման Եվրասիական հիմնադրամի համաֆինանսավորմամբ:

Տիկին Ղալեչյանը, ողջունելով հյուրերին, կարեւորել է Կայունացման եւ զարգացման Եվրասիական հիմնադրամի մասնակցությունը Հայաստանի համար կարեւոր ենթակառուցվածքային ծրագրի իրականացմանը:

Կայունացման եւ զարգացման Եվրասիական հիմնադրամի առաքելության ներկայացուցիչները նշել են, որ շինհրապարակում հողային աշխատանքներն ընթանում են ըստ ժամանակացույցի, առաջին տեղամասում արդեն իսկ ուրվագծվում է ճանապարհի ծրագիրը:

Շինաշխատանքներ են ընթանում թունելի եւ Մեղրին շրջանցող տրանսպորտային հանգույցի կառուցման ուղղությամբ: Կողմերը քննարկել են նաեւ կամուրջների, թունելների կառուցման առանձնահատկություններին առնչվող, ինչպես նաեւ այլ հարցեր:

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՆՔ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԸ» Գ

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ Cerebrum Intellectus-Ի ԴԱՍԸՆԹԱՑ

Օրերս «Գիտության շաբաթ» փառատոնի շրջանակում ftNFT ֆիջիթալ սփեյսում տեղի է ունեցել Cerebrum Intellectus-ի դասընթաց: Դասընթացը վարել է Fastex-ի կրթական գծով խորհրդական Սերգեյ Թանթուշյանը: Վերջինս հանդիպում է ունեցել Երեւանի թիվ 112 ավագ դպրոցի աշակերտների հետ, կիսվել ոլորտային կարեւոր մանրամասներով եւ պատասխանել պատանիների հարցերին:

Թանթուշյանը կարեւորել է հանրակրթական դպրոցների աշակերտների հետ այս ձեւաչափով հանդիպումները: Դասընթացների նպատակն է համախմբել արվեստի եւ բիզնեսի ոլորտների փորձագետներին եւ նորարարական կրթություն մատուցել երիտասարդ սերնդին:

Հոկտեմբերի 5-ին մեկնարկած «Գիտության Շաբաթ» փառատոնին մասնակցել է ավելի քան 34 կազմակերպություն, որոնց թվում են եղել գիտական ինստիտուտներ, լաբորատորիաներ, համալսարաններ եւ նորարարական ընկերություններ, այդ թվում՝ Fastex-ը: Փառատոնի ընթացքում ավելի քան 20 000 այցելուներ մասնակցել են գիտափորձերի եւ սեմինարների:

Fastex-ի կրթական ծրագրերը կլինեն շարունակական: Cerebrum Intellectus-ի առաջիկա դասընթացների վերաբերյալ մանրամասներին կարող եք ծանոթանալ հղումով:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange կրիպտո փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիջիթալ սփեյսներով, ինչպես նաեւ YoHealth՝ առողջ ապրելակերպը խթանող հավելվածը: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԱՌԱՆՑ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՄԱԿՆՇՄԱՆ ԾԽԱԽՈՏԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՓՈՐՁ Է ԿԱՆԽՎԵԼ

Օրերս ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցներն օպերատիվ տվյալներ էին ստացել առ այն, որ «Ագարակ» մաքսային անցման կետի տարածքում՝ մարդատար ավտոմեքենաների համար նախատեսված ռենտգեն սարքավորման ետնամասում՝ պետական սահմանին կից, առկա է մեծ քանակությամբ ծխախոտային արտադրանք:

Ստացված տեղեկությունն իրացնելիս՝նշված հատվածում կոմիտեի ՄԴՊ վարչության օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցները հայտնաբերել են առանց ակցիզային մակնշման ծխախոտների 29 արկղ, որոնց մեջ առկա են եղել 14500 տուփ «VAN», «Marlboro Nano», «Marlboro», «LAMER», «Wisdom» գրառմամբ ծխախոտներ:

Ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ հայտնաբերված ծխախոտի խմբաքանակը հնարավոր է պատկանում է ՀՀ քաղաքացի Ա.Ա.-ին: Պարզվել է, որ վերջինս, օրերս, իր կողմից վարած բեռնատար ավտոմեքենայով ԻԻՀ-ից ՀՀ է տեղափոխել նշված ծխախոտները: Քաղաքացին 14500 տուփ ծխախոտը դատարկել եւ թաքցրել է Հայաստանի պետական սահմանի մոտ՝նպատակ ունենալով շրջանցել մաքսային հսկողությունը եւ դրանք տեղափոխել ՀՀ պետական սահմանով, ինչի վերաբերյալ նա տվել է հայտարարություն:

Դեպքի առթիվ ՀՀ մաքսային կարգավորման մասին օրենքի 312-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխումը՝ մաքսային հսկողությունը շրջանցելով, կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն եւ մնացած փաստաթղթերի հետ ներկայացվել է ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն՝ հետագա ընթացքն ապահովելու համար:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է հոկտեմբերի 1-ից 30-ն ընկած ժամանակահատվածում ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության իրականացրած հարկային իրավախախտումների կանխման, խափանման եւ բացահայտման ուղղությամբ համալիր օպերատիվ- հետախուզական միջոցառումների արդյունքները: 63 դեպքով արձանագրվել են առանց համապատասխան հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու՝ ընդհանուր 9.683.125 ՀՀ դրամի ՀՀ հարկային օրենսգրքի պահանջների խախտումով ապրանքների տեղափոխման կամ մատակարարման դեպքեր: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 50.764.675 ՀՀ դրամ: Ցանկ 1-ը կցվում է:

16 դեպքով կազմվել են ապօրինի գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ արձանագրություններ: Ապօրինի ձեռնարկատիրական եկամտի չափը կազմել է 128.340.432 ՀՀ դրամ: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 64.335.716 ՀՀ դրամ: Ցանկ 2-ը կցվում է:

16 դեպքով արձանագրվել են լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու խախտումներ: Արձանագրված խախտումների գումարը կազմում է 22.750.000 ՀՀ դրամ:

ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում նոյեմբերի 7-ին կայացել է քննարկում՝նվիրված Հնդկաստանից բարձր որակավորում ունեցող աշխատուժի ներգրավմանը, որը վարել է նախարարի տեղակալ Էդգար Զաքարյանը:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ աշխատանքի սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, NSDC (National Skill Development Corporation) International Limited հնդկական կազմակերպության անդամներ, հայկական բիզնես կազմակերպությունների եւ միությունների ներկայացուցիչներ, ոլորտի այլ պատասխանատուներ:

Հանդիպմանը ներկայացվել են NSDC-ի գործունեությունն ու առաջարկվող որակավորված աշխատուժի՝ այլ երկրներում աշխատելու հնարավորությունները, աշխատանքի ընթացքում առաջացող խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր ուղիները:

Կարեւորվել է երկկողմ համագործակցությունը եւ արձանագրվել արտերկրից աշխատուժի ներգրավման նպատակով դյուրին ընթացակարգերի ներդրման քաղաքականության մշակման անհրաժեշտությունը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԸ

Երեւանում մեկնարկել է Երեւանի նորաձեւության շաբաթ 2024-ը: Բացման արարողությանը մասնակցել է քաղաքապետ Տիգրան Ավինյանը, Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Գալագերը, Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) ընկերության հայաստանյան գրասենյակի ղեկավար Մադլեն Ռաուշենբերգերը, գեղեցկուհի եւ մոդել, «Միսս Հայաստան» եւ «Վիցցե Միսս Եվրոպա» տիտղոսակիր Լուսինե Թովմասյանը եւ այլոք:

Միջոցառման գլխավոր հովանավորը Երեւանի քաղաքապետարանն է, այն, արդեն երկրորդ տարին անընդմեջ, հովանավորում է նաեւ ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանությունը, Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) ընկերության հայաստանյան գրասենյակը:

Միջոցառումը սկսվել է նոյեմբերի 7-ի երեկոյան կայացած բացման արարողությամբ, որին հաջորդել են մի քանի ցուցադրություններ եւ կտեւի մինչեւ նոյեմբերի 10-ը՝ մեկ հարթակում հավաքելով հայ եւ միջազգային դիզայներներին, ոլորտի կարեւոր դեմքերին եւ նորաձեւությամբ հետաքրքրվողներին:

Երեւանի նորաձեւության շաբաթվա բացման արարողությունը տեղի է ունեցել նոյեմբերի 7-ին Երեւանում գտնվող Հայ Բռնադատվածների հուշահամալիրում, որի դռները հազվադեպ են բացվում: Այս մասին բացման արարողության իր խոսքում նշել է Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Հուշահամալիրը երկար ժամանակ է ինչ փակ է եւ նման որոշման քաղաքապետարանը դժվարությամբ է հանգել, քանի որ այն Խորհրդային տարիներին բռնադատվածների հիշատակի վայրն է: Սակայն, ինչպես նշեց քաղաքապետ Տիգրան Ավինյանը, վայրը խորհրդանշական է՝ քանի որ արվեստը, եւ նորաձեւությունը հատկապես, ազատության մասին է:

ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանն իր ելույթի խոսքում նշեց, որ այս շաբաթը հայկական տաղանդի դինամիկ զարգացման խորհրդանիշն է:

Բացման արարողությանը ցուցադրվեց Իտալիայում բնակվող հայ մոդելավորող Նաիրա Խաչատրյանի հավաքածուն. մոդելները կրում էին Հայկ Անանյանի հեղինակած կոշիկներն ու մոդելավորող Անի Խաչատրյանի՝ զարդերի հավաքածուն:

Հաջորդը՝ Fashion Scout Armenia տաղանդների բացահայտման մրցույթն էր, որին հաջորդեցին արցախցի ուսանողների կողմից ստեղծված հավաքածուներն ու CRELAB Kotayk եւ CRELAB Tavush կենտրոնների կանանց կողմից ստեղծված հավաքածուները:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 1-ին կայացած մամուլի ասուլիսի ընթացքում «Նորաձեւության եւ հագուստի պալատ» ՀԿ-ի նախագահ, դիզայներ Վահան Խաչատրյանն ուրախությամբ նշել էր, որ այս տարի նորաձեւության շաբաթն անցկացվելու է ավելի մասշտաբային, իսկ հետաքրքրվածությունը միջոցառման հանդեպ բավականին մեծացել է:

«Երեք օր շարունակ 15-ից ավելի տաղանդավոր դիզայներներ կցուցադրեն իրենց նորագույն հավաքածուները, այցելուները հնարավորություն կունենան մասնակցելու տարբեր ներկայացումների, հետաքրքիր քննարկումների եւ անհատական ցուցահանդեսների: Կլինեն բազմաթիվ հնարավորություններ շփվելու դիզայներների, միջազգային հյուրերի եւ մամուլի ներկայացուցիչների հետ»,- նշել էր Խաչատրյանը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԹԵՄԱՏԻԿ

ՀԻՄՆՎՈՒՄ Է ԲՏՃՄ ՈԼՈՐՏԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն այցելել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան՝ ծանոթանալու բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն եւ մաթեմատիկա ոլորտի գերազանցության եզակի կենտրոնի հիմնման աշխատանքներին:

Ժամանակակից կրթական մարտահրավերներին եւ միջազգային չափանիշներին համապատասխան կենտրոնն իր մեջ ներառում է 6 լաբորատորիա եւ 2 կենտրոն՝ գիտական միջոցառումների ու վերապատրաստման ժամանակակից սրահ եւ մասնագիտական կողմնորոշման ու նախնական փորձառության ձեւավորման լսարան:

Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն եւ մաթեմատիկա ոլորտի գերազանցության եզակի կենտրոնը միտված կլինի ներկա ու ապագա ուսուցիչների կարողությունների զարգացմանը, նորարարական, գործնական ու հետազոտական հմտություններով եւ կարողություններով զինված մասնագետների պատրաստմանը:

ԳՈՅ ԹԱՏՐՈՆԸ ՎԵՐՍԿՍԵԼ Է ՆՍՏԱՑՈՒՅՑԸ

Գոյ թատրոնի դերասան, ռեժիսոր Գուրգեն Սարգսյանն ինստագրամի իր էջում հրապարակել է Գոյ թատրոնի հիմնադիր, ռեժիսոր Արմեն Մազմանյանի՝ տարիներ առաջ տված հարցազրույցը, որտեղ նա անդրադարձել է թատրոնի շենքի խնդրին:

«Եթե դու քո մասին չասես, ոչ ոք չի էլ ասելու: Ստիպված եմ հիշեցնել, որ 90թ-ից առ այսօր այս բլքոզում՝ Սունդուկյանի տանիքում, որտեղ սեփական միջոցներով մենք կառուցել ու ստեղծել ենք թատերական միջավայր, տասնյակ տաղանդավոր մարդիկ, թատերախմբեր կայացել են, ճանաչում են գտել եւ դարձել մեր արվեստի անքակտելի մասը: Մի քանի դեբյուտ ռեժիսոր է կայացել:

Մենք մեր միջոցները տրամադրել ենք, անվճար գումար էլ ենք ծախսել մեր գրպանից, այլ ոչ թե վարձ ենք վերցրել, ինչպես հիմա անում են պետական թատրոնները: Մենք գոյելու ենք, որովհետեւ այլ բան ես չեմ կարող անել եւ չեմ էլ ուզում անել:

Ես արվեստի մարդ եմ, միգուցե ժամանակն է, եւ կարելի է սթափվել ու հասկանալ, որ պետք է ապրել ու գործել մեր երեխայի, թոռան, վաղվա համար: Այսօր լռելն էլ է դավաճանություն»,- ասել է Արմեն Մազմանյանը:

Նշենք, որ «Գոյ» թատրոնը վերսկսել է նստացույցը: Այս մասին տեղեկանում ենք «Գոյ» թատրոնի ֆեյսբուքյան էջում տարածած հայտարարությունից:

«ԿԳՄՍ Նախարարությունից պահանջում ենք՝ միջանկյալ հրատապ լուծում. Գոյթատրոնի աշխատանքների վերսկսումը մինչեւ դատարանի եւ իրավապահ մարմինների կողմից հարցի վերջնական լուծումը»,- ասված է հայտարարության մեջ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԸ ՆՇԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐԱՆՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶՉԻ ԺՊ-Ի ԱՆՈՒՆԸ

Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանը Հայաստանի Հանրային հեռուստաընկերության «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ» հաղորդաշարի ժամանակ նշել է, թե ում գլխավորությամբ է Հայաստանի ընտրանին մասնակցելու առաջիկա երկու հանդիպումներին:

«Նոյեմբերյան հանդիպումներում Հայաստանի հավաքականը կգլխավորի մարզչական շտաբը՝ Սուրեն Չախալյանի գլխավորությամբ, որից հետո կնշանակվի նոր գլխավոր մարզիչ: Գլխավոր մարզչի պաշտոնում այս պահին կան թեկնածուներեր, որոնց հետ մենք հիմա բանակցում ենք: Շատ տարբեր տրամաչափի մասնագետների հետ ենք հիմա բանակցում, բայց այս պահին որեւէ պարզաբանում չեմ տա այդ առումով, քանի որ դա կարող է վնասել բանակցային գործընթացին»,- հարցազրույցի ժամանակ նշեց ՀՖՖ նախագահը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ Ալեքսանդր Պետրակովը հեռացվել էր Հայաստանի ընտրանու գլխավոր մարզչի պաշտոնից: Մեր ընտրանին առաջիկա հանդիպումը կանցկացնի Երեւանում, նոյեմբերի 14-ին՝ Ֆարերյան կղզիների հավաքականի հետ:

ՔԱՂՈՒՄ ԵՆՔ ԴԱՍԵՐ ԵՎ ՇԱՐԺՎՈՒՄ ԱՌԱՋ. «ՆՈԱ»-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ցավալի պարտություն Լոնդոնում: Քաղում ենք դասեր եւ շարժվում առաջ: Այս մասին հայտարարություն է տարածել «Նոա»-ն:

«Շնորհակալ ենք մեր երկրպագուներին՝ մեզ հավատալու եւ աջակցելու համար»,- ասված է հայտարարության մեջ:

Հիշեցնենք, որ երեկ Կոնֆերենցիաների լիգայի 2024/2025թթ. խաղարկության Լիգայի փուլի 3-րդ տուրում Երեւանի «Նոան» «Սթեմֆորդ Բրիջում» մրցեց Լոնդոնի «Չելսիի» հետ: Խաղն ավարտվել է 8-0 հաշվով, հօգուտ «Չելսիի»:

ՈՒԵՖԱ ԿԱՆԱՆՑ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 7-ին ՈւԵՖԱ-ի շտաբ-բնակարանում՝ շվեյցարական Նիոն քաղաքում, կայացավ ՈւԵՖԱ կանանց Ազգերի լիգայի որակավորման փուլի վիճակահանությունը: Այս մասին հայտնում է ՀՖՖ պաշտոնական կայքը:

Կանանց ազգային հավաքականն ընդգրկվեց C լիգայի C3 խմբում, որտեղ կմրցի Լյուքսեմբուրգի, Ղազախստանի եւ Լիխտենշտեյնի հավաքականների հետ:

Խաղացանկը հայտնի կդառնա ավելի ուշ:

● Նոյեմբերի 8-ին՝ ժամը 15:00-ին, Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում կցուցադրվի «Խենթը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.000-3.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Լիլիթ Մարկոսյան
(47 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Լ. Մարկոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն): Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել, թե որոնք են ծննդի պետական գրանցման հիմքերը:

Լարիսա Պետրոսյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ ծննդի պետական գրանցման հիմքերն են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքի բժշկական կազմակերպությունում տեղի ունեցած կամ բժշկական կազմակերպության կամ բժշկի օգնությամբ, սակայն բժշկական կազմակերպությունից դուրս տեղի ունեցած ծննդի դեպքում՝ ծննդի մասին սահմանված ձեւի բժշկական փաստաթուղթը,

2) օտարերկրյա պետության տարածքի բժշկական կազմակերպությունում տեղի ունեցած կամ բժշկական կազմակերպության կամ բժշկի օգնությամբ, սակայն բժշկական կազմակերպությունից դուրս տեղի ունեցած ծննդի դեպքում՝ ծննդի մասին բժշկական փաստաթուղթը,

3) երեխայի ծննդյան փաստը հաստատող՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը,

4) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը,

5) օտարերկրյա պետությունում ծնված անձի՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայականը եւ ծնունդը հիմնավորող այլ փաստաթղթեր:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծննդի պետական գրանցման՝ ներառյալ վկայական տալու համար պետական տուրք չի գանձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Շառլ Ազնավուրի ստեղծագործական կյանքի վերելքներն ու վայրէջքները, նրա հուսալքություններն ու հաջողությունները վառ դրսեւորումներով, երաժշտական ու բեմադրական հետաքրքիր լուծումներով ներկայացվում են արտիստին նվիրված «Ազնավուր» համերգ-ներկայացման մեջ, որը տարիներ անց մեծ բեմ է վերադարձել ոգով ու նոր շնչով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*